# Նոր տնօրեններ ԳԱԱ-ում

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում երեկ տեղի են ունեցել ԳԱԱ-ի 4 գիտական կազմակերպությունների տնօրենների ընտրություններ:

Ինչպես հայտնում են ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնից, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն ընտրվեց կենսաբանական գիտությունների դոկտոր **Բարդուխ Գաբրիելյանը**: ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց պատմական գիտությունների թեկնածու **Պավել Ավետիսյանը**: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ռուբեն Սաֆրաստյանը** վերընտրվեց ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում: ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ժիրայր Վարդանյանը**:

Բոլոր տնօրեններն ընտրվեցին միաձայն: